Եւ ահա —

Քառակուսի սենեակը լեցուն է նոր կեանքով: Հայրս պառկած է գետնին. ինձ թւում է մեծ եւ յաղթանդամ: Շուրջը կանայք լաց են ասում: Մայրս գլխի մօտ, կիսամեռ վիճակի մէջ, ես՝ մօտը: Առաջարկում է ինձ համբուրել ճակատը. վախում եմ եւ քիչ յետ եմ քաշւում:

Պատերից գեղնած լուսանկարները նայում են լայն աչքերով՝ գոհ են: Արծաթէ կուռ սուրը աչքերին մէջ տեսիլք է պարզում եւ բազկաթոռը վեհ է:

Նոր քուն:

Միւս օրը եպիսկոպոսի ճառը. մեծ դահլիճում, եկեղեցի, պատարագ ու թափորը՝ ռուս սպաներ, երաժշտութիւն, պսակներ եւ շքանշանները կախուած փոքրիկ բարձի վրայ:

Ցարը, եկեղեցին, դպրոցը անցան յուղարկաւորական թափորով, եւ մահը տիրեց ամէն ինչի վրայ:

Եւ յիշում եմ այդ —

Մինչեւ ամէնքը զբաղուած էին թաղումով, հօրս ննջասենեակի դուռը բաց էր մնացել: Վարագոյրը միշտ գոց էր, եւ կիսաբստուերի մէջ սենեակը լուռ էր եւ մռայլ:

Մանկական հետաքրքրութիւնս բաւարարելու համար կամաց ներս մտայ: Ամէն բան տակն ու վրայ էր: Մօտեցայ պատին՝ չգիտեմ ինչ տեսնելու համար: Ցանկարծ սուրը աղմուկով վայր ընկաւ. նախ վախցայ, բայց յետոյ ուժ առի եւ նորից մօտեցայ ու մնացի քարացած: Գետին ընկած մի լուսանկարից նախ բարձրացան երկու վառվռուն աչքեր, յետոյ գլուխը ձեւ առաւ ու մարմինը երկար վերարկու հագած, ձեռքերը գրպաններում, նայեց ինձ, մինչեւ սրտիս խորքն ու անյայտացաւ: Սարսռացի, բայց չվախեցայ:

Մի շաբաթ յետոյ, տունը լքեցինք եւ ամէնքս մեկնեցանք:

* * *

Այսօր մտածում եմ. ի՞նչքան նման էր լուսանկարի այդ նայուածքը Բրիւսելի հին պալատի առջեւ կանգ առնող նայուածքին:

Ու դեռ քանի՞ ուրիշ անդամներ...

* * *

Իտալական երգը Սեւ Ծովի ալիքների հետ մրցման մէջ է մտել:

Վենետոյի սիրուն խօսուածքը, գրեթէ դայլայլը, գունաւոր թռչունների երամներ է ժողովում: Նախադասութիւնները բռնկում են օդի մէջ եւ գեղեցիկ կայծերով վար իջնում: Կատակները սիրուն են եւ քաղաքավարութեան մէջ 18-րդ դարու, մեծ դուքսերի ժամանակներից մնացած, կեղծամների փոշի է թափւում:

Բոլոր երկիրների նաւաստիների մէջ ծովերի անողոք չունչը կայ, հասկանալի կոպտութիւն, որ Ջենովացիների հռչակը կազմել է Արեւելքում: «Կօնարօն», մեղմաբարոյ է եւ սիրուն: Լադունայի հայելիներում արտացոլուող հմայչութիւն կայ այստեղ եւ, կէսօրի արեւի տակ այրուող, երվիներանդ բազիլիկոսի ներդաշնակութիւնը: Իտալիան մեծ է, որովհետեւ ամէն մի իտալացի իր արիւնի մէջ կրում է նրա ամբողջ անցեալը եւ ներկան՝ ներդաշնակ այն կուլտուրան, որի վրայ հիմնուած է երկրագնդի հաւասարակշռութիւնը:

Ամէնքն էլ մեծ յարգանքով եւ մի տեսակ հրճուանքով են նայում նաւապետին:

Նաւապետը Ֆիումէից է, Դ'Անունցիոյի մարդկանցից:

Երիտասարդ, գորովալի, լայն ուսերի վրայ կայտառ գլուխ, բարձր ճակատ, ճկուն եւ կտրուկ շարժումներով, երգող ձայնով — նոր սերունդի, պատերազմից յաղթական եւ անբաւական դուրս եկած սերնդի, իսկական տիպար:

Ես չեմ սիրում Դ'Անունցոյին՝ ոչ գրականութիւնը եւ ոչ մարդը, բայց անուրանալի է նրա մեծութիւնը, գեղեցիկ է նրա կեցուածքը, լատինական է ժեստը եւ նկարագեղ է իր հռետորականութիւնը:

Իտալիան, արթնացած, մարդ է որոնում, հերոս, եւ, բնական է, Դ'Անունցիոն այդ մարդը չէ: Սակայն, լաւ է խաղում դերը եւ ճիշդ է իր առած տոնը: Ահա ինչու երիտասարդութիւնը խանդավառ է:

Նաւապետը իր սենեակը զարդարել է սիրած հերոսի լուսանկարներով: Նրա մասին խօսելու ժամանակ աչքերը փայլում են, ձայնը մասնաւոր չեշտ է ընդունում եւ եռանդով լեցւում է:

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան